

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ՆԵՐՍԷԱՆ ԱՐՁԱԿՈՒԹԻՐ
ԵՒ

ՍԱՂԻՄԱԿԱՆ ՀԱՆԳԻՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ներսէսները զերէն չարաք յատկացած էր ժառանգաւորաց վարժարանի եռամսեայ քննութիւններուն, որմէ ետքը սկսաւ նմանական արձակուրդը։ — Ս. Աթոռիս ամէնէն հանդիսաւոր շրջաններէն մէկը։

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը իր ներկայութեամբ հրապարակաւ աւելցուց Ս. Յակոբի կամարներուն ներքե կատարած հոգեւոր հանդիսական պաշտամունքներուն ն. Ամեն. Սրբազանութիւնը, արտակարգ յոգեւորական մը հետեանքներէն ըզգուշանալու համար միայն Ս. Պատարար շմատոյցն եւ ինչպէս Ս. Յակոբ Մժրնայ հայրապետի, Նոյնպէս Ս. Աթոռիս պաշտպան Տեսնեցաւ Յակոբիս Առաքելի տոնախմբութեան նախատեսուկին նախադասեց և առաւել ալ (Յունիար 5 եւ) իջաւ եկեղեցիի և Փառք ի բարձունքի ու Մանկունքի տանն, բարձրացաւ Առաքելական Աթոռը, և ընդունեցաւ Միարանութեան շնորհաւորութիւնները աշխարհայրոյ։ Այս հանդիսաւոր օրուան պատարագիչն է Չիլիկիերան եղիչէ եպոս. եկեղեցւոյ աւարտումէն ետքը պատրիարքարանի մէջ Ս. Պատրիարք Հայրը ընդունեցաւ շնորհաւորութիւնները Ստեփանոսի տանը Ս. Յակոբի մէջ մասնաւոր նշանակութեան ունի Սարկաւազաց համար։ Ատենք են ժամերգութեան կարգադրիչներն ու վարիչները, նախօրէի իրենց մէջ կատարուած խորհրդակցութեան և կազմուած յայտարարի մը համաձայն։ Ս. Պատրիարք Հայրը նախադասեց Ս. Ստեփանոսի նախատեսուկին և տոնախմբութեան (Յունիար 7 եւ) Սարկաւազանը Ս. Աթոռիս Գանձարանին ամէնէն թանկագին շապիկներով, ուրաններով, սաղաւարտներով զգեստաւորուած և բուրձառներով ներկայացան Ս. Պատրիարքին Փառք ի բարձունքի և Մանկունք տանն, և առին ն. Բ. Սրբազանութեան հայրական օրհնութիւնները։ Ստեփանոսի տանին պատարագիչն էր ժամօրհնող Հայր Վրթմանէ Գառնապետ, իսկ քարոզը խոսեցաւ Բարդէն Սրբազան, բացատրելով Ստեփանոսի նկարագիրը իրրե մարդ հաւատքի և գործութեան և առանք արտայայտելու համար անոր ունեցած իմաստութիւնն ու օգին։

Որդւոց Սրբաման տանը տօնն է նաեւ Ս. Աթոռիս և Ս. Յակոբի Տաճարին։ Ս. Պատարարք մատոյց Պարբին. Փառնորդ Միարիչ Սրբազան, և իր քարոզով պողոտ յորդր մը բրաւ գաղթական ժողովուրդին որպէսզի նախնեաց բարեպաշտութեամբ պատուեն Ս. Գլխադիրը, որու հովանոյն տակ կը բնակին։

Մենդեան և Աստուածայայտութեան տանը շատ շնորհ հանդիսութեան կատարուեցաւ այս տարի Ռեթիկէմի մէջ։ Շատ աղուսը էր օգը, այնպէս որ բազում ժողովուրդ փութացած էր երթալ Ռեթիկէմ։ Մեր Թափօրը, որ այլեւս օրօ-

ներով կը կազմուի երեսադէմէն-Ռեթիկէմ շինուած նաւթակուս հիանալի համբուս վրայ, առաւել ժամը 10ին մեկնեցաւ Ս. Յակոբէն։ Ս. Պատրիարք Հօր օրօյին առջեւ կը բալէին հեծեալ և հրօցանակիւր աստիկաններ։ Ռեթիկէմի Մայր տանարի հրապարակին վրայ, տանիքներու վրայ ուխտաւորներու և հետաքրքրներու բազմութիւնը խռնուած էր, Ռեթիկէմի վտեմ. Կառավարիչը, աստիկանապետը և աստիկանները զիմաւորեցին Ս. Պատրիարքը և Թափօրը յառաջացաւ ժառանգաւորաց Խորհուրդ մեծ երգած առնն, զէպի տանար և մեր վաճարը։ Ս. Պատրիարքը ժողովուրդը օրհնութեամբ արձակելէ ետքը, Տեսնաւորանի մէջ ընդունեցաւ Ռեթիկէմի վտեմ. Կառավարիչը, և երեկիները։ Այս վերջինները, Տեսնաւ Ս. Պատրիարքը իրենց զուտն ունենալով, եկած էին Ս. Պատրիարքը զիմաւորելու մինչև համբուս կէտը, Յունաց Ս. Եղիս վանքին առջև։

Կէսօրէն ետքը ժամը 1.30ին սկսաւ ճրագալոյցի հանդիսութիւնները մենդեան Տաճարին մէջ։ Ս. Պատրիարք Հայրը իջաւ սրեւադարդ Մայր տանար և Հրաւարիւրով առաջնորդուեցաւ զէպի Այրը, ուր կատարեց ուխտ, հանդերձ Միարանութեամբ, և ժամատուարի արարողութիւնն ալ կատարելէ ետքը վերադարձաւ երեսադէմ։

Իսկ մենդեան գիշերուան պատարարք մատոյց Լուսարարապետ Մերոյ Սրբազան և իր քարոզութեամբ միտքարեց ուխտաւորաց բազմութիւնը։

Թափօրը հետեւալ առաւել միւնեոյն կարգով և շքով վերադարձաւ Ս. Յակոբ, և Պատրիարքարանի մեծ սրահին մէջ Ս. Պատրիարքը ընդունեցաւ Միարանութեան շնորհաւորութիւնները։

Մենդեան երկրորդ օրը Ս. Պատրիարք Հայրը ընդունեցաւ երեսադէմի բոլոր հոգեւոր պետներուն և կրօնական հաստատութեանց ներկայացուցիչներուն պատանական շնորհաւորութիւնները։

Մենդեան արձակուրդն ու հանդիսութիւնները վերջացան Յունիար 22, Կիր. և զգրուցաւան աշխատութիւններ վերսկսան հետեւալ Բշ. առաւել։

ԱՅԴԱՊԱՏՈՒՄԷՆ ԵՏԲԸ ԵՐՈՒՍԱԿԼԻՄԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Ազգապատուր հրատարակուեցաւ վտեմ. Պոզոս Փաշա նուպարի առատաւնեւութեամբ։

Ն. Վսեմութիւնը այնքան գուն մնացած է Ազգապատուրի խնամատ տաղաքութեան և մանաւոր, իրրե Ազգային պատմութեան կարեւոր մէկ մաս, անոր օգտակարութեան վրայ՝ բարեգէն Սրբազանի առաջարկութեան վրայ՝ քարհանած է հոգալ նաեւ Տիգրան Սաւալանեանի գրած երեսադէմի Պատմութեան տաղաքութեան ծախքը։

Հանդիսով կը հրատարակենք Ն. Վսեմութեան կողմէ Բարդէն Սրբազանի ուղղուած գեղեցիկ նամակին գլխաւոր մասերը։

Նամակը ֆրանսերէն է և գրուած Յունիար 4ին, Քանէն, ուր կը ձմեռէ Պոզոս Փաշա։

—«Սրբազան».

«Ձեռն կրնար բացատրել թէ ո՞րչափ ուրախ եղայ տեսնելով որ այնքան խնամքով տպագրութեամբ է այս գեղեցիկ հատորը երուսաղէմի մեր տպարանին մէջ: Անոր բոլոր փառքը կը պատկանի մեզի, եւ ես հաճոյքով կը շնորհաւորեմ մեռք բերուած արդիւնքը շնորհիւ այն յոգնութեան և ջանքերուն զորս զուգը նուիրեցիք Սրբաժաննան Սրբազանի այս հոյակապ գործին հրատարակութեան, որ թանկագին բաժին մը պիտի բերէ լեցնելու համար մեր ազգային պատմութեան մէջ ընդհատ մը:

«Շնորհակալ եմ նաեւ Ձեր Սրբազնութեան այն խօսքերուն համար զորս կ'ընէք իմ ստանձնած բաժնին նկատմամբ այս գործին տպագրութեան մէջ, իսկ մասնաւորապէս երախտապարտ եմ Ձեզ որ իմ Հօր յիշատակը արձանագրած էք Ազգապատմութեան առաջին երեսին վրայ:

«Այնչափ հմայուած եմ այս հրատարակութեամբ որ չեմ վառանդիւր ընդունելու Ձեր առաջարկը, զոր բրիք ինձի մեր 1927 թ. 27 թուականի նամակով, հրատարակելու համար իզմիրցի Տիգրան Սաւաղանի գրած երուսաղէմի Պատմութիւնը, որու մասին վկայեցիք թէ մագիստրոսական գործ մըն է և արժանի՝ մեր ազգային տարեգրութեանց մէջ տեղ մը գրաւելու:»

Ազնուասիրտ և առտոտածուն Փաշան այս գեղեցիկ նամակին հետ հարիւր Անգլիական ոսկիի չէք մըն ալ զրկած է Քարգէն Սրբազանին՝ ի հաշիւ հրատարակելու գործին, որպէս զի անմիջապէս ձեռնարկուի ատոր տպագրութեան:

Սաւայանի գրած պատմութիւնը գրաբար է, և Ամեն Ս. Պատրիարք Հօր հրամանով, մէկ կողմէն աշխարհարարի պիտի վերածուի, միւս կողմէն ալ պիտի տպագրուի, որպէսզի Հայ ժողովուրդը կարող ըլլայ հիմայ իր խօսած ու հասկըցած հայերէնով կարգաւ այս հոյակապ գիրքը:

Այս ընդարձակ հատորը Աշխարհարարի վերածնելու յոգնութիւնը յանձն առաւ Գեր. Մեհրոպ Եպս. Նշանեան, և արդէն ձեռնարկեց գործի:

Առաջիկային պիտի տանք ՍԻՈՒՆի մէջ հարկ եղած տեղեկութիւնները երուսաղէմի Պատմութեան բաժանորդագրութեան պայմաններու մասին:

Ս. ՅԱԿՈԲ ԵՒ ՎԱՏԻԿԱՆ

Վատիկանի Մատենադարանին Արեւելեան Բաժինին Մատենադարանապետը Մօնսինեօր Թիարան 1923 ի Յուլիոսին այցելած էր Ամեն Ս. Պատրիարք Հօր և այս առթիւ հետաքրքրուած էր տեսնել Ս. Յակոբի տպարանը և Ձեռագրաց Մատենադարանը, որ հաստատուած է Ս. Թորոս Եկեղեցւոյն մէջ, հօրի և ջորի անթափանցելի, ապահով շէնք մը:

Յարգելի Մատենադարանապետը հիացած է Հայ Ձեռագիրներու այս ճոխ հաւաքածօսին վրայ, և միւս կողմէն փափաք յայտնած է գնել Ս. Յակոբի Տպարանէն լոյս տեսած գիրքերէն Վատիկանի Մատենադարանին համար: Ս. Պատ-

րիարք Հայրը իմանալով ասիկա, ուզուած հատորները նուէր բրած է Վատիկանի Մատենադարանին:

Մօնսինեօր Թիարան, Հոսմ վերադարձին, երուսաղէմի Հայոց Պատրիարքին այս նուիրատւութիւնը կը տեղեկացնէ Սրբազան Փաշանայ պիտին, որ ի նշան իր գոհունակութեան Ս. Յակոբի Մատենադարանին կը նուիրէ լուսատուօրինակը այն յունարէն Յատմաւորքին, որ յատկապէս զրկագրուած է Բիւզանդիոսի Հայագլի Վատիկ. Բ. Կայսեր (796 - 1025) համար (*):

Մօնսինեօր Թիարան իր տեսակցութեան պահուն յայտնած է Ս. Պատրիարք Հօր թէ սկսած է կազմել Վատիկանի Մատենադարանին մէջ գտնուող Հայերէն Ձեռագիրներուն Մայր Յօցակը:

Յարգելի Մատենադարանապետին այդ գործը, յատկենքէնով, լոյս տեսած է Վատիկանի արպարանէն, հոյակապ հրատարակութիւն մը, չքեղ տպագրութեամբ, որմէ օրինակ մը նուէր զրկած է Ամեն Ս. Պատրիարք Հօր, երուսաղէմի Դամիսկիեան գիտուն Միաբանութիւնէն Հայր Արեւի ձեռքով, իմացնելով միանգամայն թէ այս գործին առաջին երկու օրինակներէն մին Ս. Պատրիարքին ներկայացուցած է, իսկ միւսն ալ Դուրեան Ս. Պատրիարքին:

Ն. Ամեն. Սրբազնութիւնը պաշտօնագիրով մը իր շնորհակալութիւնը յայտնած է Մօնսինեօր Թիարանին:

Մամօր.—Այս ստոյգ տեղեկութիւններով ինքնին կ'ուզուին վերջերս Հայ Թերթերու մէջ Ս. Յակոբի և Վատիկանի յարաբերութեանց մասին տեսնուած այլընդայլ լուրեր:

Ս. ՅԱԿՈԲԱՅ ՄԱՏԵՆԱԿԱՆՆԵՐ

—Հաճոյքով կ'արձանագրենք թէ ԿՈՉԵԱԿԻ Տնօրէն վեր. Խ. Պեննեան 10 հատոր անգլիերէն նոր և բնօրր գործեր նուիրած է մեր Մատենադարանին:

—Ձմառի փառքին մեծաւոր Դեր. Կ. Վ. Պատուահասան նուիրեց հեղցի, Անգլեան Դերապաճառ Աղքատեղբանի հետեւալ գործերէն երկերկու օրինակ. 1.—Համառօտ Պատմութիւն երկուստան Կաթողիկոսաց Կիլիկիոյ. տպ. 1906 Վիեննայի-Ս. Ղազար, 8° էջ 70: 2.—Համառօտ Պատմութիւն Եպիսկոպոսական Աթոռոյ ի Պատրիարքութեան Կիլիկիոյ, տպ. 1906, Վիեննայի-Ս. Ղազար, 8° էջ 49: 3.—Histoire Abrégée des sièges Archevêques et Evêques du Patriarcat de Cilicie; Deuxième Edition; Imprimerie Catholique, Beyrouth:

Իօրին շնորհակալութիւններ յարգելի ներատեսչներուն:

(*) Ինչպէս որ այս Ձեռագրին բնագիրը գլուխ գործոցն է յայն գրչագրութեան և մանրամասնութեան, նոյնպէս այս լուսատուօրն ալ գլուխ գործը մըն է գեղարուեստական տպագրութեան: Գործին Խաղիւրէն վերանային է Ս. Menologio di Basilico II (Cod. Vaticanum Græco 1613), տպագր. Torino, Fratell Bocca - Editioni, Mdccecvii: Այս օրինակը կը կէ **116** Թիար